Հավելված N 3
ՀՀ կառավարության 2025 թվականի
մայիսի 8-ի N 570 - Ն որոշման

«Հավելված N 16
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ-ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՀԱՍԱՐԱԿ ԳՐԱՎՈՐ ԳՈՐԾԱՐՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԾԱԳՈՂ ՍԵՓԱ-ԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են առանց Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ստորաբաժանում ներկայանալու տրանսպորտային միջոցների պետական գրանցման-հաշվառման էլեկտրոնային հարթակում (այսուհետ՝ հարթակ) տրանսպորտային միջոցի օտարման նպատակով հասարակ գրավոր գործարքի՝ առուվաճառքի կամ նվիրատվության (այսուհետ՝ գործարք) կատարման, այդ գործարքից բխող՝ տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի միաժամանակ պետական գրանցում և պետական հաշվառում (այսուհետ՝ գրանցում և հաշվառում) կատարելու հետ կապված հարաբերությունները:

2. Հարթակում գործարքի կատարումը և դրանից ծագող՝ տրանսպորտային միջոցի գրանցումը և հաշվառումը հասանելի է միայն ֆիզիկական անձանց պատկանող՝ Հայաստանի Հանրապետությունում այդ գործողության պահի դրությամբ գրանցված և (կամ) հաշվառված տրանսպորտային միջոցների համար:

2. ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

3. Սեփականության իրավունքով իրեն պատկանող տրանսպորտային միջոցը վաճառել կամ նվիրաբերել ցանկացող ֆիզիկական անձը (այսուհետ՝ օտարող, նվիրատու, իսկ բոլորը միասին այսուհետ՝ օտարող) և այդ տրանսպորտային միջոցը գնել կամ նվիրատվություն ստանալ ցանկացող ֆիզիկական անձը (այսուհետ՝ ձեռք բերող, նվիրառու, իսկ բոլորը միասին այսուհետ՝ ձեռք բերող) գործարք կատարելու, պետական գրանցման և պետական հաշվառման համար հարթակ կարող են մուտք գործել խիստ նույնականացում անցնելու միջոցով՝ անցնելով նույնականացում «ԵսԵմ» ազգային նույնականացման հարթակում:

4. Օտարողը, հետևելով հարթակի հրահանգներին, հարթակի միջոցով ընտրում է իրեն սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցը, որը ցանկանում է օտարել, ներկայացնում է հայտարարություն՝

1) հերթական կամ ցանկալի հաշվառման համարանիշերը չփոխարինելու համաձայնության մասին (բացառությամբ միայն գրանցում ունեցող տրանսպորտային միջոցների), եթե կողմերի միջև առկա է նման համաձայնություն.

2) տրանսպորտային միջոցի համարակիր ագրեգատների և թափքի (խցիկի) գույնի փոփոխություն կատարված չլինելու մասին.

3) ոչ ուշ, քան ձեռք բերողի կողմից գործարքը վավերացվելուց հետո 7-օրյա ժամկետում ձեռք բերվող տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշերը (բացառությամբ այն դեպքերի, երբ հարթակի միջոցով ներկայացվում է հերթական կամ ցանկալի հաշվառման համարանիշերը գործարքի կողմերի համաձայնությամբ չփոխարինելու մասին հայտարարություն կամ ձեռք բերվող տրանսպորտային միջոցը հանդիսանում է միայն պետական գրանցում ունեցող տրանսպորտային միջոց) և հաշվառման վկայագիրը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն ներկայացված լինելու (այդ թվում՝ պատվիրված փոստով, ստանալու մասին ծանուցմամբ) մասին.

4) օտարվող տրանսպորտային միջոցի բոլոր սեփականատերերի՝ «ԵսԵմ» ազգային նույնականացման հարթակի միջոցով խիստ նույնականացման արդյունքում տրված համաձայնությունը տրանսպորտային միջոցն օտարելու մասին, եթե օտարվող տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության էլեկտրոնային ռեգիստրում գրանցված է մեկից ավելի անձանց անունով.

5) գործարքի վերաբերյալ բոլոր ծանուցումները և կայացված վարչական ակտերն իր էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու մասին:

5. Հարթակն ինքնաշխատ եղանակով, էլեկտրոնային թվային այլ համակարգերից տվյալների ստացմամբ, ստուգում է օտարողի, ինչպես նաև օտարման համար ընտրված տրանսպորտային միջոցի տվյալները:

6. Այն դեպքում, երբ ստացված տվյալների հիման վրա օրենքով արգելվում է տվյալ տրանսպորտային միջոցի պետական գրանցումը և հաշվառումը, կամ օտարողը գտնվում է հետախուզման մեջ, հարթակը դրա մասին ծանուցում է օտարողին և ընդհատում է գործընթացը:

7. Ստացված տվյալների հիման վրա, օրենսդրությամբ նախատեսված տրանսպորտային միջոցի պետական գրանցման և հաշվառման արգելքների բացակայության դեպքում, հարթակն առաջարկում է ընտրել օտարման տարբերակը՝ առուվաճառքի կամ նվիրատվության գործարքի կնքմամբ: Առուվաճառքի գործարքն ընտրելու դեպքում օտարողը հարթակում լրացնում է նաև տրանսպորտային միջոցի վաճառքի գինը: Այնուհետև, օտարողը լրացնում է ձեռք բերողի վերաբերյալ հարթակում պահանջվող տվյալները:

8. Հարթակն ինքնաշխատ եղանակով, էլեկտրոնային թվային այլ համակարգերից տվյալների ստացմամբ, ստուգում է ձեռք բերողի տվյալները:

9. Այն դեպքում, երբ ստացված տվյալների հիման վրա օրենսդրությամբ արգելվում է տվյալ տրանսպորտային միջոցի պետական գրանցումը և հաշվառումը ձեռք բերողի կողմից, կամ նշված գործողությունները կատարելու համար անհրաժեշտ է ներկայանալ հաշվառման- քննական բաժին, ապա հարթակը դրա մասին ծանուցում է օտարողին և ընդհատում է գործընթացը:

10. Ստացված տվյալների հիման վրա, օրենսդրությամբ նախատեսված տրանսպորտային միջոցի պետական գրանցման և հաշվառման արգելքների և նշված գործողությունները կատարելու համար հաշվառման-քննական բաժին ներկայանալու անհրաժեշտության բացակայության դեպքում հարթակն ինքնաշխատ եղանակով հաշվարկում է և օտարողին առաջարկում կատարել օտարման դեպքում տրանսպորտային միջոցի գրանցման-հաշվառման գործողության համար անհրաժեշտ վճարները՝ գույքահարկը, պետական տուրքերը, պարտադիր այլ վճարները:

11. Էլեկտրոնային եղանակով վճարումների կատարման ավարտից հետո հարթակն առաջարկում է օտարողին ստուգել բոլոր տվյալները և հաստատել: Օտարողի կողմից հաստատվելուց հետո գործարքի տվյալների վերաբերյալ գեներացվում է համացանցային ակտիվ հղում և առաջարկվում այն փոխանցել ձեռք բերողին անմիջապես համակարգի միջոցով կամ էլեկտրոնային այլ տարբերակներով: Ուղարկման վերաբերյալ էլեկտրոնային ծանուցում է ուղարկվում գործարքի կողմերին:

12. Ձեռք բերողը, հաղորդագրությունն ստանալուց հետո եռօրյա ժամկետում, անցնելով ստացված հղումով, մուտք է գործում հարթակ խիստ նույնականացում անցնելու միջոցով՝ անցնելով նույնականացում «ԵսԵմ» ազգային նույնականացման հարթակում: Ծանոթանալով գործարքի բոլոր տվյալներին և համաձայնելով դրանց հետ, ձեռք բերողը հարթակի միջոցով՝

1) ներկայացնում է հայտարարություն հերթական կամ ցանկալի հաշվառման համարանիշերը չփոխարինելու համաձայնության մասին (բացառությամբ միայն գրանցում ունեցող տրանսպորտային միջոցների), եթե կողմերի միջև առկա է նման համաձայնություն.

2) կատարում է օրենքով սահմանված տուրքերի և վճարների վճարում (բացառությամբ տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշ հատկացնելու համար վճարման ենթակա պետական տուրքի և ցանկալի համարանիշ ստանալու համար վճարման ենթակա օրենսդրությամբ հաստատագրված լրացուցիչ գումարի վճարումների, եթե հարթակի միջոցով ներկայացվում է հերթական կամ ցանկալի հաշվառման համարանիշերը գործարքի կողմերի համաձայնությամբ

չփոխարինելու մասին հայտարարություն)՝ միաժամանակ նշելով հաշվառման համարանիշերն ստանալու եղանակը՝ հաշվառման-քննական ստորաբաժանումից կամ փոստային առաքմամբ.

3) ներկայացնում է հայտարարություն գործարքի վերաբերյալ բոլոր ծանուցումները և կայացված վարչական ակտերն իր էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու մասին.

4) ընտրում է ձեռք բերվող տրանսպորտային միջոցի նոր հաշվառման վկայագիրը թվային տարբերակով իր էլեկտրոնային փոստի միջոցով ստանալու և (կամ) հաշվառման-քննական ստորաբաժանումից կամ փոստային առաքմամբ ստանալու եղանակը:

13. Սույն կարգի 12-րդ կետով նախատեսված գործողությունների կատարման ավարտից հետո համակարգն ինքնաշխատ եղանակով գեներացնում է օտարման (առուվաճառքի կամ նվիրատվության) էլեկտրոնային պայմանագիրը: Պայմանագիրը վավերացվում է ձեռք բերողի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ «ԵսԵմ» ազգային նույնականացման հարթակի միջոցով:

14. Սույն կարգի 12-րդ կետով նախատեսված ժամկետում նույն կետով նախատեսված բոլոր գործողությունները չկատարելու դեպքում գործարքը համարվում է չեղարկված:

15. Ձեռք բերողի կողմից վավերացվելուց հետո օտարողի էլեկտրոնային փոստի հասցեին ինքնաշխատ եղանակով ուղարկվում է համացանցային ակտիվ հղում՝ պայմանագիրը «ԵսԵմ» ազգային նույնականացման հարթակի միջոցով ստորագրելու հնարավորությամբ: Ուղարկման վերաբերյալ էլեկտրոնային ծանուցում է ուղարկվում գործարքի կողմերին:

16. Օտարողը, բացելով ստացված համացանցային հղումը, վավերացնում է ձեռք բերողի կողմից արդեն իսկ վավերացված պայմանագիրն իր էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ «ԵսԵմ» ազգային նույնականացման հարթակի միջոցով: Ստորագրումից հետո համակարգը երկկողմանի ստորագրված, վավերացված պայմանագիրն ուղարկում է գործարքի կողմերի էլեկտրոնային փոստի հասցեներին:

17. Պայմանագիրն օտարողի կողմից վավերացնելու պահից գործարքը համարվում է կատարված, և համակարգն ինքնաշխատ եղանակով պատրաստում է տրանսպորտային միջոցի պետական գրանցման և պետական հաշվառման գործողության նախագիծը, որի հաջող ավարտի մասին անմիջապես հաղորդագրություն է ստացվում օտարողի և ձեռք բերողի էլեկտրոնային հասցեներին:

18. Հերթական կամ ցանկալի հաշվառման համարանիշերը գործարքի կողմերի համաձայնությամբ չփոխարինելու մասին հայտարարություն ներկայացնելու դեպքում հաշվառման նոր համարանիշեր չեն հատկացվում:

19. Սույն կարգով նախատեսված՝ կողմերի համաձայնությամբ ձեռք բերվող տրանսպորտային միջոցի հերթական կամ ցանկալի հաշվառման համարանիշերը գործարքի կողմերի համաձայնությամբ չփոխարինելու հետ կապված կարգավորումները չեն գործում, և հաշվառման գործողությունը ենթակա է մերժման (բացառությամբ, երբ ձեռք բերողը համաձայնություն է տալիս այն փոխանակելու մասին), եթե ձեռք բերվող տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշերը չեն համապատասխանում այդ պահի դրությամբ գործող սույն որոշման N 11 հավելվածով սահմանված հաշվառման համարանիշերի ձևերին (հին նմուշի են):

20. Տրանսպորտային միջոցը համարվում է հաշվառված, եթե հարթակում տեղեկատվություն է ստացվում սույն կարգի 4-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով, 16-րդ կետերով սահմանված գործողությունների կատարված լինելու մասին, և բացակայում են «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքով, սույն կարգով, ինչպես նաև սույն որոշման N 2 հավելվածի 10-րդ կետով նախատեսված՝ տրանսպորտային միջոցի գրանցումը և հաշվառումը մերժելու հիմքերը:

21. Ձեռք բերված տրանսպորտային միջոցի նոր հաշվառման վկայագիրը (բացառությամբ այն դեպքերի, երբ հարթակում ձեռք բերողն ընտրել է ձեռք բերվող տրանսպորտային միջոցի նոր հաշվառման վկայագիրը թվային տարբերակով իր էլեկտրոնային փոստի միջոցով ստանալու եղանակը), իսկ հերթական կամ ցանկալի հաշվառման համարանիշերը գործարքի կողմերի համաձայնությամբ չփոխարինելու

մասին հայտարարություն ներկայացված չլինելու դեպքում՝ նաև հաշվառման համարանիշերը, պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, առաքվում են ձեռք բերողին սույն կարգի 17-րդ կետով նախատեսված հաղորդագրությունն ստացվելուց հետո 5-օրյա ժամկետում: Առաքանին վերադարձվելու դեպքում, դրա մասին հաղորդագրություն է ուղարկվում ձեռք բերողի էլեկտրոնային փոստի հասցեին՝ նշելով, որ փաստաթղթերը ձեռք բերողը (կամ նրա ներկայացուցիչը) կարող է ստանալ իր հաշվառման վայրի տարածքային հաշվառման-քննական բաժնից:

22. Տրանսպորտային միջոցի պետական գրանցման և հաշվառման գործողության կատարումը մերժելու մասին ձեռք բերողի և օտարողի էլեկտրոնային փոստի հասցեներին անմիջապես ուղարկվում է հաղորդագրություն:

23. Տրանսպորտային միջոցի պետական գրանցման և հաշվառման գործողության կատարումը մերժելու մասին որոշումը կայացնելուց հետո այն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հանձնվում է վարչական ակտի հասցեատիրոջը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ